ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2
ԳՀԱՇՁԲ-ԱԻՆ-19/50 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ ՆԻՍՏԻ

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ ԳՊ/ԳԱՊ գնահատման պատասխանատու

Հովիկ Պողոսյան՝ ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության շենքերի, շինությունների պահպանման բաժնի պետ

Անդամներ՝ ԳՊ/ԳԱ գնահատող անձնակազմ

Արմենուհի Մկոյան՝ ԱԻՆ ֆինանսատնտեսագիտական վարչության ֆինանսաբյուջետային բաժնի պետ.

Նորայր Կարապետյան՝ ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության շենքերի, շինությունների պահպանման բաժնի գլխավոր մասնագետ.

Անդամներ՝ ԳՊ/ԲԱ – բացող անձնակազմ

Տիգրան Ալեքսանյան՝ ԱԻՆ խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող.

Հայկ Ծատուրյան՝ ԱԻՆ իրավական ապահովման և միջազգային պայմանագրերի վարչության օրենսդրության կատարելագործման բաժնի առաջատար մասնագետ.

Հանձնաժողովի քարտուղար՝

Արմինե Գալուստյան՝ ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության գնումների կազմակերպման բաժնի գլխավոր մասնագետ.

1. Տեղեկություն հայտերի բացման վայրի, օրվա, ժամի մասին

1.1 Կոտայքի մարզի Գետարգել համայնքի «Ռուս-հայկական մարդասիրական արձագանքման կենտրոնի տարածքում 0.4կՎտ մալուխային և լուսավորության ցանցի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով ԳՀԱՇՁԲ-ԱԻՆ-19/50 ծածկագրով ընթացակարգի հրավերը Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ս.թ. օգոստոսի 5-ին հրապարակվել է գնումների էլեկտրոնային համակարգում՝ www.armeps.am կայքում և գնումների պաշտոնական տեղեկագրում:

1.2 Գնային առաջարկ պարունակող հայտերը բացվել են էլեկտրոնային եղանակով 12.08.2019թ., ժամը 11.00-ին:

1.3 ԳՀԱՇՁԲ-ԱԻՆ-19/50 ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նախագահը հայտարարեց ձեռքբերվող ծառայության նախահաշվային գինը մեկ թվով արտահայտված:

1.4 Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները, տվյալները

N	Մասնակցի անվանումը	Հասցեն, էլ. փոստը
1	«ՆԱՄԵՆԱՍԵԴ» ՍՊԸ	Եղվարդ Սևակի 51, namenased@mail.ru,
2	«Կամարաշար» ՍՊԸ	Սևան, Նաիրյան 139 14, kamarashar@yahoo.com,
3	«Արման Սթոուն Սթայլ» ՍՊԸ	Մարտունի, aramanstyle@mail.ru,
4	«Էփրան» ՍՊԸ	ՀՀ, Արագածոտնի մ, ք. Աշտարակ, Արցախի փ, 4, epranshin@gmail.com
5	«ՄԱԴՈՅԱՆ» ՍՊԸ	Հրազդան Միկրոշրջան 303 38, nerses@madoyan.am

2. Տվյալներ՝ հայտերը կազմելու, ներկայացնելու, սահմանված կարգի պահանջներին համապատասխանության և բացված հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

2.1 «ՆԱՄԵՆԱՍԵԴ» և «Էփրան» ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված հայտերը կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը և համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

2.2 «Արման Սթոուն Սթայլ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտում բացակայում է գնային առաջարկը:

2.3 «Կամարաշար» և «ՄԱԴՈՅԱՆ» ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված հայտերը կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, բացառությամբ լիցենզիաների:

3. Նախահաշվային գները, մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները.

ՀՀ դրամ

Հ/հ	գնման առարկայի անվանումը	մասնակիցներ	նախահաշ-վային գին	գնային առաջարկները		
				առանց ԱԱՀ	ԱԱՀ	ընդհ. գինը
1	Կոտայքի մարզի Գետարգել համայնքի «Ռուս-հայկական մարդասիրական արձագանքման կենտրոնի տարածքում 0.4կՎտ մալուխային և լուսավորության ցանցի կառուցման աշխատանքներ /շինարարական աշխատանքներ հոսանքագծերի համար	«Էփրան» ՍՊԸ	8 849 210	5 666 000	-	5 666 000
		«Մադոյան» ՍՊԸ		5 800 000	1 160 000	6 960 000
		«ՆԱՄԵՆԱՍԵԴ» ՍՊԸ		5 850 230	1 170 046	7 020 276
		«Կամարաշար» ՍՊԸ		6 285 600	1 257 120	7 542 720
		«Արման Սթոուն Սթայլ» ՍՊԸ				

4. Հանձնաժողովը որոշեց.

4.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետով՝ մերժել «Արման Սթոուն Սթայլ» ՍՊ ընկերության հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

4.2 Ղեկավարվելով Կարգի 41-րդ կետով՝ նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով մինչև ս.թ. օգոստոսի 13-ը, ժամը 14.00-ը և «Կամարաշար» և «ՄԱԴՈՅԱՆ» ՍՊ ընկերություններին ծանուցել՝ առաջարկելով սահմանված ժամկետում շտկել արձանագրված անհամապատասխանությունը

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

13.08.2019թ.

5. Ընդունել ի գիտություն.

Մասնակիցները սահմանված ժամկետում շտկել են արձանագրված անհամապատասխանությունը:

6. Հանձնաժողովը որոշեց.

6.1 Ղեկավարվելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով՝ «Էփրան» ՍՊ ընկերությունը 1-ին չափաբաժնով ճանաչել առաջին տեղը զբաղեցրած մասնակից.

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

6.2 Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ ՀՀ ԿԱ Պետական եկամուտների կոմիտեից կատարել հարցում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

6.3 Ղեկավարվելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ծանուցել՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

6.3 ԳՀԱՇՁԲ-ԱԻՆ-19/50 ծածկագրով էլեկտրոնային ձևով գնանշման հարցման ընթացակարգի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել Կարգի 46-րդ կետով սահմանված ժամկետում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Հ. Պողոսյան

անդամներ՝ _____ Ա. Մկոյան

_____ Ն. Կարապետյան

_____ Տ. Ալեքսանյան

_____ Հ. Ծատուրյան

քարտուղար՝ _____ Ա. Գալուստյան